

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

« 25 » սեպտեմբեր 2024թ. No 5174 - Լ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ՍՏԱՑՎԱԾ «ՄՎԱՍԻ (ԲԵՎԱՑԻՉՈՒՄԱԲ) ԼՈՒԾՈՒՅԹ ՆԵՐԵՐԱԿԱՅԻՆ 25ՄԳ/ՄԼ 16ՄԼ» ԵՎ «ՄՎԱՍԻ (ԲԵՎԱՑԻՉՈՒՄԱԲ) ԼՈՒԾՈՒՅԹ ՆԵՐԵՐԱԿԱՅԻՆ 25ՄԳ/ՄԼ 4ՄԼ» ԴԵՂԵՐՈՎ «Վ.Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ««ՅՈԼՅԱՆ» ԱՐՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ, «ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ, «ՇԵՆԳԱՎԻԹ ԲԿ», ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ. «ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ, «ԱՍՏՂԻԿ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ, «ԷՐԵՐՈՒՆԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ, «ԱՐԹՄԵԴ» ԲԺՇԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ, «ՄԵԴԱՅՆ ԿԼԻՆԻԿ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ «ԳՅՈՒՄՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ» ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՈՒԺՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 05-Ի ԹԻՎ 3056-Լ ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել մարդասիրական օգնությամբ ստացված «Մվասի (բևացիզումաբ) լուծույթ ներերակային 25մգ/մլ 16մլ» և «Մվասի (բևացիզումաբ) լուծույթ ներերակային 25մգ/մլ 4մլ» դեղերով «Վ.Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերությունում, ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲ ընկերությունում, «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲ ընկերությունում, «Շենգավիթ ԲԿ», ՓԲ ընկերությունում. «Վանաձորի բժշկական

կենտրոն» ՓԲ ընկերությունում, «Աստղիկ» բժշկական կենտրոնում, «Էրեբունի» բժշկական կենտրոնում, «Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոնում, «Մեդլայն կլինիկ բժշկական կենտրոն» ՍՊ ընկերությունում և «Գյումրի բժշկական կենտրոնում» իրականացվող բուժման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝ ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2024 թվականի հունիսի 05-ի «Մարդասիրական օգնությամբ ստացված «Մվասի (բեվացիզումաբ) լուծույթ ներերակային 25մգ/մլ 16մլ» և «Մվասի (բեվացիզումաբ) լուծույթ ներերակային 25մգ/մլ 4մլ» դեղերով «Վ.Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» և ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություններում իրականացվող բուժման ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2024 թվականի մարտի 06-ի թիվ 1227-Լ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 3056-Լ հրամանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Լ.ՆԱՆՈՒՇՅԱՆ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ՍՏԱՅՎԱԾ «ՄՎԱՍԻ (ԲԵՎԱՑԻՁՈՒՄԱԲ) ԼՈՒԾՈՒՅԹ ՆԵՐԵՐԱԿԱՅԻՆ 25ՄԳ/ՄԼ 16ՄԼ» ԵՎ «ՄՎԱՍԻ (ԲԵՎԱՑԻՁՈՒՄԱԲ) ԼՈՒԾՈՒՅԹ ՆԵՐԵՐԱԿԱՅԻՆ 25ՄԳ/ՄԼ 4ՄԼ» ԴԵՂԵՐՈՎ «Վ.Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ««ՅՈԼՅԱՆ» ԱՐՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ, «ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ, «ՇԵՆԳԱՎԻԹ ԲԿ», ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ. «ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ, «ԱՍՏՂԻԿ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ, «ԷՐԵՐՈՒՆԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ, «ԱՐԹՄԵԴ» ԲԺՇԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ, «ՄԵԴԱՅՆ ԿԼԻՆԻԿ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ «ԳՅՈՒՄՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ» ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՈՒԺՄԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ լիազոր մարմին) անունով մարդասիրական օգնությամբ ստացված և բաշխված դեղերն անվճար տրվում են բոլոր պացիենտներին, ըստ բժշկական ցուցումների՝ անկախ սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկում ընդգրկվածությունից:

2. «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերությունում, ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲ ընկերությունում, «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲ ընկերությունում, «Շենգավիթ ԲԿ», ՓԲ ընկերությունում. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում, «Աստղիկ» բժշկական կենտրոնում, «Էրեբունի» բժշկական կենտրոնում, «Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոնում, «Մեդլայն կլինիկ բժշկական կենտրոն» ՍՊ ընկերությունում և «Գյումրի բժշկական կենտրոնում» իրականացվող բուժման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում մարդասիրական օգնությամբ ստացված «Մվասի (բևացիզումաբ) լուծույթ ներերակային 25մգ/մլ 16մլ» և

«Մվասի (բևացիզումաբ) լուծույթ ներերակային 25մգ/մլ 4մլ» դեղերը տրվում են բոլոր պացիենտներին՝ ըստ բժշկական ցուցումների:

3. Քիմիաթերապիայի ռեժիմի և «Մվասի (բևացիզումաբ) լուծույթ ներերակային 25մգ/մլ 16մլ» և «Մվասի (բևացիզումաբ) լուծույթ ներերակային 25մգ/մլ 4մլ» դեղերի նշանակումը կատարվում է բուժող բժշկի կողմից, հաստատվում է բժշկական կազմակերպության ղեկավարի կամ բաժնի վարիչի կողմից:

4. Բժշկական կազմակերպությունը լիազոր մարմին է ներկայացնում պացիենտների վերաբերյալ «Մվասի (բևացիզումաբ) լուծույթ ներերակային 25մգ/մլ 16մլ» և «Մվասի (բևացիզումաբ) լուծույթ ներերակային 25մգ/մլ 4մլ» դեղերով հատկացումը իրականացնելու համար անհրաժեշտ տվյալներ:

5. Բժշկական կազմակերպությունը «Մվասի (բևացիզումաբ) լուծույթ ներերակային 25մգ/մլ 16մլ» և «Մվասի (բևացիզումաբ) լուծույթ ներերակային 25մգ/մլ 4մլ» դեղերի վերաբերյալ (յուրաքանչյուր եռամսյակ)՝ մինչև հաջորդ եռամսյակի առաջին ամսվա 20-ը լիազոր մարմին է ներկայացնում հաշվետվություն՝ բժշկական կազմակերպությունում «Մվասի (բևացիզումաբ) լուծույթ ներերակային 25մգ/մլ 16մլ» և «Մվասի (բևացիզումաբ) լուծույթ ներերակային 25մգ/մլ 4մլ» դեղերի առկա մնացորդների, ծախսի, հաշվառված պացիենտների թվի, պացիենտների տվյալների, բնակության վայրի, հատկացված դեղերի քանակների վերաբերյալ:

6. Ծրագրում պացիենտների ընդգրկման համար անհրաժեշտ է ներկայացնել.

1) Պացիենտի էպիկրիզ,

2) Պացիենտի անձնական տվյալներ, անձնագրի պատճեն կամ նույնականացման քարտի պատճեն,

3) Պացիենտի կոնտակտային տվյալներ:

8. Ներկայացվող էպիկրիզում պարտադիր ներառվում են տվյալները ըստ հիվանդության փուլերի՝ համաձայն ուղեցույցերի:

9. Եթե կլինիկական փուլը համապատասխանում է, ապա սահմանվում է հետևյալ տվյալների պարտադիր առկայությունը՝

1) Հիվանդության պատմության և բժշկական զննության նկարագիր,

- 2) Համակարգչային շերտագրության (ն/ե կոնտրաստավորմամբ), անհրաժեշտության դեպքում ՄՌՇ և/կամ ՊԷՏ/ԿՏ հետազոտության տվյալները,
- 3) Ուռուցքի պաթոհյուսվածաբանական տվյալները,
- 4) Ուռուցքի իմունահիստոքիմիական տվյալները՝ ըստ անհրաժեշտության:

10. Ուղեկցող հիվանդությունների առկայության դեպքում տվյալ հիվանդության կարգավիճակը ճիշտ գնահատելու, դեղի հնարավոր կողմնակի ազդեցությունները կանխելու և/կամ վերահսկելու նպատակով իրականացվում են լրացուցիչ հետազոտություններ.

- 1) Արյան ընդհանուր քննություն,
- 2) Նյութափոխանակության համապարփակ հետազոտություն, այդ թվում լյարդի և երիկամների ֆունկցիոնալ թեստեր: